ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 76-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 4-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 4-Լ հրամանով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 24-րդ կետում «, ոստիկանության՝ Երևան քաղաքի և մարզային վարչություններից ու դրանց ենթակա ստորաբաժանումներից» բառերը հանել,

2) Ուժը կորցրած ճանաչել 25-րդ կետի 9-րդ ենթակետը և 30-րդ կետը,

3) 27-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«27. Ոստիկանության կենտրոնական ապարատի անմիջական ենթակայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) Ոստիկանության զորքերին ենթակա գնդերը, գումարտակները.

2) Ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչությանը ենթակա տարածքային ստորաբաժանումները.

3) Ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչությանը ենթակա ստորաբաժանումները.

4) Ոստիկանության պարեկային ծառայության գլխավոր վարչությանը ենթակա շարային ստորաբաժանումները.

5) Ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնին ենթակա ստորաբաժանումները.

6) Ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությանը ենթակա գնդերը, գումարտակները, վաշտերը, բաժինները, բաժանմունքները, ռազմականացված ջոկատները:»:

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ
«01» 11 2024թ.
քաղ. Երևան